Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 օգոստոսի 2024 թվականի N01/08

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 526-Ն Որոշման 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/22 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու առաջարկը /հետայսու՝ նաև Առաջարկ/ և կնքվելիք պայմանագրի նախագիծը ընտրված

մասնակից «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ին, armeps.am համակարգի՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ, ուղարկվել է 2024թ. հուլիսի 12-ին:

Առաջարկի համաձայն՝ *,,Սույնով հայտնում եմ, որ ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-14/22 ծածկագրով գնման ընթացակարգի **2-րդ**, 18-րդ, 19-րդ, 22-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ն:*

*Հաշվի առնելով վերոգրյալը հրավերի պահանջներին համաձայն կից Ձեզ է ներկայացվում համապատասխան պայմանագրի նախագիծը, որը Ձեր հետ կարող է կնքվել հրավերով սահմանված կարգով և ժամկետներում՝ որակավորման (հաղթած չափաբաժինների նախահաշվային արժեքի 15%) և պայմանագրի (հաղթած չափաբաժինների նախահաշվային արժեքի 10%) ապահովումները ներկայացվելու դեպքում: Խնդրում եմ ուղեկցող գրությամբ Ձեր կողմից հաստատված պայմանագրի օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները հրավերով սահմանված կարգով և ժամկետներում **(5 աշխատանքային օրվա ընթացքում)** ներկայացնել Պատվիրատուին՝ ք. Երևան, Հր. Ներսիսյան 7 հասցեով,,:*

«Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է Պայմանագիրը, **սակայն ներկայացվածը չի ներառել 2-րդ չափաբաժինը: Ստացվում է նշված չափաբաժնի մասով մասնակիցը հրաժարվել է Պայմանագիր կնքելու իրավունքից:**

Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կարգավորումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Ալֆա-Էտալոն ՍՊԸ»-ն 2-րդ չափաբաժնի մասով փաստացի հրաժարվել էր Պայմանագիր կնքելու իրավունքից, մերժել է Վերջինիս կողմից ներկայացված հայտը:

Ողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի հիմքով անհրաժեշտ է «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ին (գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծ 29 ա, բն 37, ՀՎՀՀ՝ 00454717) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ ՀՈՎԻԿ ԲԱԼՅԱՆ